ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

8 նոյեմբերի 2024թ. թիվ 1266

Լ. ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով և 13-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2024 թվականի փետրվարի 26-ի «Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների 2024 թվականի վերապատրաստման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 151 հրամանը և ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2024 թվականի օգոստոսի 21-ի թիվ 05/114.1/06837-2024 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Լևոն Սաղաթելյանին 2024 թվականի նոյեմբերի 11-ից 13-ը ներառյալ՝ երեք օրով գործուղել ք.Երևան՝ Պետական կառավարման ակադեմիա՝ «Ժամանակի կառավարում» թեմայով վերապատրաստում անցնելու համար:

2. Լ.Սաղաթելյանի բացակայության ընթացքում Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետի պարտականությունների կատարումը դնել Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ Գալուստ Մելիքսեթյանի վրա:

3. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

08/11/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2024թ. նոյեմբերի 8
ք.Վանաձոր